ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

11 հուլիսի 2023 թվականի քաղ. Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան, հետեւյալ կազմով՝

նախագահող Է.Վ. Հայրիյան,

զեկուցող դատավոր Ա.Մ. Աժիբրահիմովա,

դատավորներ Ժ.Ն. Բաիշեւ, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն. Նեշատաեւա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար Ա.Կ. Ասանալիեւա,

լսելով զեկուցող դատավորին, ուսումնասիրելով գործի նյութերը,

առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի Ստատուտի 46-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է հետեւյալ խորհրդատվական եզրակացությունը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի եւ Եվրասիական տնտեսական միության մարմինների առանձին որոշումների դրույթները պարզաբանելու մասին Բելառուսի Հանրապետության

արդարադատության նախարարության դիմումի համաձայն։

Դիմողի հարցը

Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարությունը Բելառուսի Հանրապետության անունից (այսուհետ՝ դիմող) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի եւ Եվրասիական տնտեսական միության մարմինների առանձին որոշումների դրույթները պարզաբանելու մասին դիմումով։

Դիմողը հղում է կատարում Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետին, համաձայն որի այն արտադրանքը, որի առնչությամբ ուժի մեջ է մտել Միության տեխնիկական կանոնակարգը, Միության տարածքում շրջանառության մեջ է դրվում՝ պայմանով, որ դա անցել է Միության տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ համապատասխանության գնահատման անհրաժեշտ ընթացակարգերը։

Դիմողը նշում է, որ ներկայումս ջրային եւ փրփուրային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների կազմում աշխատող տեխնիկական միջոցները (կառավարման հանգույցները եւ տարբեր լրակազմող սարքավորումներ (ազդանշանային եւ հակադարձ կափույրները, սողնակները, փականները, կռունկները, հեղուկի ճնշման եւ հոսքի ազդանշանիչները եւ այլն)) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 23-ի թիվ 40 որոշմամբ ընդունված՝ «Հրդեհային անվտանգության ապահովման եւ հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 043/2017) (այսուհետ՝ ԵԱՏՄ ՏԿ 043/2017) տեխնիկական կանոնակարգման օբյեկտ են եւ ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման։

ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի 91-րդ կետով նախատեսվում է, որ նշված կանոնակարգին արտադրանքի համապատասխանությունն ապահովվում է անմիջապես դրա պահանջների կատարմամբ կամ այն ստանդարտների ցանկում ներառված

ստանդարտների պահանջների կատարմամբ, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահպանումը։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 որոշմամբ հաստատված՝ «Կամավոր հիմունքով կիրառման արդյունքում «Հրդեհային անվտանգության ապահովման եւ հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 043/2017) պահանջների պահպանումն ապահովող միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկի (այսուհետ՝ ստանդարտների ցանկ) 108-րդ կետով նախատեսվում է, որ ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահանջներին համապատասխանությունը հավաստելու համար արտադրանքի դիտարկվող խմբի առնչությամբ կամավոր հիմունքով կիրառվում է Ռուսաստանի Դաշնության ԳՕՍՏ Ռ 51052-2002 «Ջրային եւ փրփուրային հրդեհաշիջման ավտոմատ կայանքներ։ Կառավարման հանգույցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ» ազգային ստանդարտը (այսուհետ՝ ԳՕՍՏ Ռ 51052-2002), մասնավորապես՝ ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի 6.2, 6.3 եւ 7-րդ կետերը։

Շարադրվածի հիման վրա՝ դիմողը խնդրում է պարզաբանել հետեւյալը. ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի հետ փոխկապակցված՝ Ռուսաստանի Դաշնության ԳՕՍՏ Ռ 51052-2002 ազգային ստանդարտի պահանջների կամավոր կատարման կարգով հրդեհաշիջման կայանքների լրակազմող սարքավորումների համապատասխանության հավաստման դեպքում Պայմանագրի, ԵԱՏՄ ՏԿ 043/2017 տեխնիկական կանոնակարգի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 որոշման դրույթների կիրառման կարգը.

հրդեհաշիջման կայանքների լրակազմող սարքավորումների համար տրված (գրանցված) համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության հայտարարագրերի ձեւակերպման կարգն այն դեպքի համար, երբ ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի պահանջները հաստատված են ոչ Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 որոշմամբ սահմանված ծավալով.

հաշվի առնելով «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության սերտիֆիկատի եւ համապատասխանության հայտարարագրի միասնական ձեւերի եւ դրանց ձեւակերպման կանոնների մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված՝ համապատասխանության սերտիֆիկատների եւ համապատասխանության հայտարարագրերի ձեւակերպման կանոնները՝ կամավոր հիմունքով կիրառման արդյունքում տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումն ապահովող ԳՕՍՏ Ռ 51052-2002 ստանդարտի կիրառված առանձին բաժինների (կետերի, ենթակետերի) մասին տեղեկությունների ի՞նչ ծավալ պետք է արտացոլվի համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերի ձեւաթղթերում (ստանդարտի տարրերի՝ փոխկապակցված ստանդարտների ցանկով նախատեսված ողջ համակցությունը կամ միայն ստանդարտի այն տարրերի թվարկումը, որոնց պահանջները դիմողի կողմից փաստացիորեն հավաստվել են համապատասխանության գնահատման ժամանակ)։

Ընթացակարգը Դատարանում

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 75-րդ հոդվածի կարգով ուսումնասիրման համար պարզաբանումների վերաբերյալ գործի նախապատրաստման շրջանակներում ուղարկվել են հարցումներ, եւ ստացվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ղրղզստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների եւ

հրդեհային անվտանգության ոլորտում իրավասու մարմինների, Բելառուսի Հանրապետության օրենսդրության եւ իրավական հետազոտությունների ազգային կենտրոնի, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության Կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտի, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պետության եւ իրավունքի ինստիտուտի պատասխանները։

Դատարանի մեծ կոլեգիան խորհրդատվական եզրակացություն է տրամադրում 2023 թվականի ապրիլի 5-ի դիմումի (ելից թիվ 07-20/424) մեջ շարադրված հարցերի շուրջ։

Դատարանի մեծ կոլեգիայի եզրահանգումները

Դատարանի մեծ կոլեգիան կարծում է, որ դիմողի հարցերին պատասխանելու համար հարկավոր է պարզաբանել Պայմանագրի, ԵԱՏՄ ՏԿ 043/2017 տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ տեխնիկական կանոնակարգման ոլորտում Միության մարմինների որոշումների դրույթների կիրառման կարգը։

1. Միությունում գործում է տեխնիկական կանոնակարգման համակարգ, որն ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի իրագործման բաղկացուցիչ տարրերից մեկն է։ Տեխնիկական կանոնակարգումը ենթադրում է այն արտադրանքին ներկայացվող պարտադիր տեխնիկական պահանջների միասնականացում, որը ներառված է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 28-ի թիվ 526 որոշմամբ հաստատված՝ այն արտադրանքի Միասնական ցանկում (այսուհետ՝ միասնական ցանկ), որի առնչությամբ սահմանվում են Մաքսային միության շրջանակներում պարտադիր պահանջներ, եւ այդ նպատակների համար Միության միասնական տեխնիկական կանոնակարգերի ընդունում։

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական

կանոնակարգման մասին» արձանագրությամբ (Պայմանագրի թիվ 9 հավելված. այսուհետ՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրություն) 2-րդ կետի 27-րդ պարբերությունում սահմանվում է, որ Միությունում տեխնիկական կանոնակարգումն «արտադրանքին կամ արտադրանքին եւ դրան ներկայացվող պահանջների հետ կապված՝ նախագծման (ներառյալ հետազննությունը), արտադրության, շինարարության, մոնտաժման, կարգաբերման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման եւ ուտիլիզացման գործընթացներին ներկայացվող պարտադիր պահանջների սահմանման, կիրառման եւ կատարման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումն է, ինչպես նաեւ համապատասխանության գնահատման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը»։

Պայմանագրի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության տարածքում շրջանառության մեջ դրվող արտադրանքը պետք է անվտանգ լինի։ Արտադրանքի անվտանգության, այսինքն՝ վնաս պատճառելու եւ (կամ) հասցնելու հնարավորության հետ կապված անթույլատրելի ռիսկի բացակայության ապահովումը, ինչպես նախատեսված է «Տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության 2-րդ կետի երկրորդ պարբերությամբ, Միությունում միասնական տեխնիկական կանոնակարգման հիմնական նպատակն է։

Արտադրանքի անվտանգությունը հաստատելու եւ Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան Միության տարածքում դրա շրջանառությունը թույլատրելու համար նախատեսվում է, որ արտադրանքը պետք է անցնի Միության տեխնիկական կանոնակարգով (Միության տեխնիկական կանոնակարգերով) սահմանված՝ համապատասխանության գնահատման անհրաժեշտ ընթացակարգերը։

Դրա հիման վրա Միությունում իրագործվում է այն միասնական ցանկում ներառված արտադրանքի համապատասխանության պարտադիր գնահատում անցկացնելու կանոնների եւ ընթացակարգերի միասնականության սկզբունքը, որին

համապատասխան Միության անդամ պետություններում Միության տեխնիկական կանոնակարգերի կիրառումը եւ կատարումն իրականացվում են առանց բացառումների։

Դատարանի մեծ կոլեգիան ընդգծում է, որ Պայմանագրի 53-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերությանը համապատասխան՝ անդամ պետություններն իրենց տարածքում ապահովում են Միության տեխնիկական կանոնակարգի (Միության տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին համապատասխանող արտադրանքի շրջանառությունը՝ առանց ներկայացնելու Միության տեխնիկական կանոնակարգում ներառված՝ այդ արտադրանքին ներկայացվող պահանջներից բացի լրացուցիչ պահանջներ եւ առանց իրականացնելու համապատասխանության գնահատման լրացուցիչ ընթացակարգեր։

Պայմանագրով որոշված է Միության տեխնիկական կանոնակարգում սահմանված՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտներին ներկայացվող պարտադիր պահանջների կատարման մեխանիզմը՝ տարբեր մակարդակների ստանդարտների կիրառման միջոցով։

Այսպես՝ Պայմանագրի 52-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման եւ Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների համապատասխանության գնահատման համար կամավոր հիմունքով կարող են կիրառվել միջազգային, տարածաշրջանային (միջպետական) ստանդարտները, իսկ դրանց բացակայության դեպքում (մինչեւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ընդունումը)՝ անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտները։

Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման տվյալ մեխանիզմի իրագործման նպատակով «Տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության 4-րդ կետով սահմանվում է Հանձնաժողովի իրավասությունը՝ հաստատելու այն միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների ցանկը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկը, որոնց կամավոր հիմունքով կիրառման

արդյունքում ապահովվում է Միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը։

Ընդ որում, ազգային ստանդարտը կիրառվում է կամավոր հիմունքով եւ տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման բավարար պայման է («Տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության 4-րդ կետի 2-րդ պարբերություն)։ Միեւնույն ժամանակ «կամավորությունը» «պարտադրություն» չէ։

Պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերին, ինչպես նաեւ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 13-րդ կետին համապատասխան՝ Հանձնաժողովի որոշմամբ հաստատվող՝ Միության տեխնիկական կանոնակարգերը նորմատիվ իրավական բնույթ ունեն, ընդգրկվում են Միության իրավունքի կազմում եւ չպետք է հակասեն Պայմանագրի դրույթներին։ Պայմանագրի 51-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի եւ 52-րդ հոդվածի 2-րդ կետի բովանդակությունից հետեւում է, որ Միության տեխնիկական կանոնակարգերն ուղղակի գործողության եւ անմիջական կիրառման հատկանիշներ ունեն եւ պետք է կատարվեն առանց բացառումների՝ բացի «Տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված բացառություններից։

2. Ընդ որում, Ստանդարտների ցանկի 108-րդ կետին համապատասխան՝ մինչեւ համապատասխան միջպետական ստանդարտի մշակումը կիրառվում են ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի 6.2, 6.3, 7-րդ կետերը։

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի մայիսի 21-ի թիվ 81 որոշմամբ հաստատվել է «Հրդեհային անվտանգության ապահովման եւ հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 043/2017) պահանջները կիրառելու եւ կատարելու ու տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ

պարունակող միջպետական ստանդարտների մշակման (փոփոխությունների կատարման, վերանայման) ծրագիրը, որի 35-րդ կետով «Ջրային եւ փրփուրային հրդեհաշիջման ավտոմատ կայանքներ։ Կառավարման հանգույցներ. Ընդհանուր տեխնիկական պահանջներ. Փորձարկումների մեթոդներ» միջպետական ստանդարտի նախագծի համար պլանավորվել է ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի հիման վրա ԳՕՍՏ-ի մշակում՝ (ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի որոշակի կետերի համար) 2018-ից 2020 թվականներն ընկած ժամանակահատվածում։

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ այսօրվա դրությամբ այդպիսի ակտ ընդունված չէ, ինչը ենթադրում է, որ անհրաժեշտ է կիրառել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 որոշմամբ հաստատված՝ «Հրդեհային անվտանգության ապահովման եւ հրդեհաշիջման միջոցներին ներկայացվող պահանջների մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 043/2017) պահանջները կիրառելու եւ կատարելու ու տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկի 120-րդ կետը, որն անդամ պետության (Ռուսաստանի Դաշնության) նորմատիվ իրավական ակտի՝ ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի դրույթներին կատարված հղում է պարունակում։

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ տվյալ ցանկը պարունակում է միջպետական եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտներ, որոնք ներառում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ։

Այսպիսով, հարկավոր է տարանջատել երկու գործընթացները։

Առաջինը կապված է «ջրային եւ փրփուրային հրդեհաշիջման կայանքների

կառավարման ավտոմատ հանգույցներ» արտադրանքի համար արտադրողների կողմից կամավոր հիմունքով ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի (6.2, 6.3, 7-րդ կետեր) կիրառման կամ ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահանջների կիրառման հետ։

Երկրորդն առնչվում է ԳՕՍՏ Ռ 51052-2002-ի հիման վրա «ջրային եւ փրփուրային հրդեհաշիջման ավտոմատ կայանքների կառավարման հանգույցներ» արտադրանքի առնչությամբ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ, մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ գործածելուն եւ համապատասխանության գնահատում իրականացնելուն։

3. Արտադրանքի անվտանգության համապատասխանության գնահատման տարբեր եղանակներին կատարված հղումներին առնչվող տարանջատումը նախատեսված է «Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության սերտիֆիկատի եւ համապատասխանության հայտարարագրի միասնական ձեւերի եւ դրանց ձեւակերպման կանոնների մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 293 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության սերտիֆիկատի ձեւակերպման կանոններով (այսուհետ՝ կանոններ)։

Ընդ որում, կանոնների 6-րդ կետով սահմանված են համապատասխանության սերտիֆիկատի բովանդակությանը ներկայացվող պահանջները։ Մասնավորապես համապատասխանության սերտիֆիկատի միասնական ձեւի 10-րդ դաշտում պետք է նշվի տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) անվանումը՝ անկախ այն բանից, թե արդյոք կամավոր հիմունքով կիրառվել են ստանդարտների ցանկից միջազգային եւ տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների պահանջները։

Նշված կանոնների համաձայն՝ 11-րդ դաշտում նշվում են նաեւ այլ փաստաթղթեր, որոնք դիմողը ներկայացրել է որպես տեխնիկական կանոնակարգի (տեխնիկական կանոնակարգերի) պահանջներին արտադրանքի

համապատասխանության ապացույց, իսկ 12-րդ դաշտում՝ այլ ստանդարտների եւ փաստաթղթերի (դրանց կիրառության դեպքում) մասին տեղեկություններ եւ այլ տեղեկատվություն (առկայության դեպքում)։ Դա հաստատում է, որ սերտիֆիկատի ձեւը նախատեսում է ստանդարտները չկիրառելու դեպքում լրացնելու համար համապատասխան դաշտեր, որոնցում պետք է նշվեն սերտիֆիկացման մարմնի կողմից ռիսկերի գնահատման համար հիմք հանդիսացած այլ փաստաթղթեր։

Այսպիսով, ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահանջներին համապատասխանության գնահատման համար տնտեսավարող սուբյեկտի կողմից ազգային ստանդարտը կամավոր հիմունքով ընտրելու դեպքում համապատասխանության սերտիֆիկատի մեջ նշելու ենթակա են արտադրանքի կոնկրետ տեսակի համար ստանդարտների ցանկի 108-րդ կետով նախատեսված՝ ազգային ստանդարտի կետերի բոլոր բաղկացուցիչները։

Շարադրվածի հիման վրա՝ Դատարանի մեծ կոլեգիան դիմողի հարցերին տալիս է հետեւյալ պատասխանները։

1. ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահանջներին համապատասխանության ստուգում իրականացնելիս Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2019 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 200 որոշմամբ հաստատված՝ «Կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ԵԱՏՄ ՏԿ 043/2017-ի պահանջների պահպանումն ապահովող ստանդարտների ցանկով նախատեսված ազգային ստանդարտը տնտեսավարող սուբյեկտի կողմից կամավոր պահպանելու դեպքում գնահատման ենթակա են ազգային ստանդարտի՝ արտադրանքի կոնկրետ տեսակի համար նախատեսված կետերն ամբողջ ծավալով։

2. Համապատասխանության սերտիֆիկատներում (11-րդ դաշտ) արտացոլվում են Միության համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ներառված՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից կազմված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրությունները (սերտիֆիկացման սխեմայով նախատեսված դեպքերում)՝ ըստ այն հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների տեսակների, որոնք նախատեսված են

տեխնիկական կանոնակարգի մեջ, ինչպես նաեւ համապատասխանության գնահատման համար ստանդարտների ցանկում ներառված եւ նշված կազմակերպությունների կողմից կատարված ստանդարտների մեջ։

3. Համապատասխանության սերտիֆիկատի մեջ նշվում են ազգային ստանդարտի կետերը եւ դրանց՝ արտադրանքի կոնկրետ տեսակի համար նախատեսված բաղկացուցիչներն ամբողջ ծավալով։

Եզրափակիչ դրույթները

1. Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին։

2. Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում։

Նախագահող՝	Է.Վ. Հայրիյան
Զեկուցող դատավոր՝	Ա.Մ. Աժիբրահիմովա
Դատավորներ՝	Ժ.Ն. Բաիշեւ
	Դ.Գ. Կոլոս
	Տ.Ն. Նեշատաեւա
	Վ.Խ. Սեյտիմովա
	Գ.Ա. Սկրիպկինա
	Ա.Է. Թումանյան
	Ա.Ա. Ֆեդորցով
	Կ.Լ. Չայկա